ԼԴ/0534/02/26
(ՎԴ/5707/05/26)

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԳՈՐԾԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

21 մայիսի 2026 թվական քաղաք Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահ Գոռ Հակոբյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի նախագահին փոխարինող Արման Թովմասյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին փոխարինող Արմեն Դանիելյանս նիստում ուսումնասիրելով թիվ ԼԴ/0534/02/26 (ՎԴ/5707/05/26) գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ՀՀ Վճռաբեկ դատարան ուղարկելու վերաբերյալ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2026 թվականի մայիսի 5-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. Ս.Վ. ներկայացուցիչը 2026 թվականի ապրիլի 7-ին հայցադիմում է ներկայացրել (վարչական դատավարության էլեկտրոնային համակարգի միջոցով) ՀՀ վարչական դատարան ընդդեմ Լոռու մարզի Ալավերդի համայնքի ղեկավարի՝ 2023 թվականի դեկտեմբերի 20-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 5-ն ընկած ժամանակահատվածի համար Ս.Վ. չվճարված աշխատավարձի, հասանելի արձակուրդային վճարների, ինչպես նաև կետանցված յուրաքանչյուր օրվա համար մինչև թիվ ՎԴ6/0119/05/24 վարչական գործով կայացված և օրինական ուժի մեջ

մտած վճռի՝ օրինական ուժի մեջ մտնելը վճարման ենթակա աշխատավարձի 0,15 տոկոսի չափով տուժանքի փոխհատուցման մասին վարչական ակտն օրենքով սահմանված ժամկետում չընդունվելու հետևանքով տվյալ ակտն ընդունված համարելու վերաբերյալ համապատասխան փաստաթուղթ տրամադրելուն պարտավորեցնելու պահանջների մասին:

2. ՀՀ վարչական դատարանի՝ 2026 թվականի ապրիլի 14-ի որոշմամբ գործը վերահասցեագրվել է Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

3. Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2026 թվականի մայիսի 5-ի որոշմամբ գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարան:

4. Գործը ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է 2026 թվականի մայիսի 12-ին:

5. Ս.Վ. ներկայացուցչի՝ գործի ենթակայության վերաբերյալ դիրքորոշումը 2026 թվականի մայիսի 12-ին ներկայացվել է ՀՀ Վճռաբեկ դատարան:

<u>Ենթակայության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

6. Հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածին, 24-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 2-րդ մասին, 81-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածին, 210-րդ հոդվածի 1-ին մասին, «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2024 թվականի մայիսի 2-ի թիվ ՀՕ-220-Ն օրենքի 1-ին հոդվածին, 37-րդ հոդվածի 2-րդ մասին՝ ՀՀ վարչական դատարանը որոշմամբ գործը վերահասցեագրել է Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(…) ՀՀ վարչական դատարանն իրավասու չէ քննել Հայցվորի կողմից ներկայացված պահանջը, քանզի 2025 թվականի հունվարի 1-ից աշխատանքային վեճերի վերաբերյալ գործերի քննությունը վերապահվել է առաջին ատյանի ընդհանուր*

իրավասության դատարանին, ուստի այն պետք է վերահասցեագրել առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան: (…)»[1]:

7. Հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածին, 24-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերին, 26-րդ հոդվածի 2-րդ մասին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասին, 68-րդ հոդվածի 2-րդ մասին, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածին, 53-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴ/0823/05/14, թիվ ՎԴ/0830/05/14 և թիվ ՎԴ/1621/05/14 վարչական գործերով, ինչպես նաև 2021 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴ/9652/05/16 վարչական գործով արտահայտած իրավական դիրքորոշումներին՝ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2026 թվականի մայիսի 5-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա չէ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ու այդ առնչությամբ դիմել է Վճռաբեկ դատարան՝ նշելով հետևյալը. *«(…) Հայցվորը ոչ թե պահանջել է չվճարված աշխատավարձի, հասանելի արձակուրդային վճարների, ինչպես նաև կետրանցված յուրաքանչյուր օրվա համար մինչև թիվ ՎԴ6/0119/05/24 վարչական գործով կայացված և օրինական ուժի մեջ մտած վճռի օրինական ուժի մեջ մտնելը վճարման ենթակա աշխատավարձի 0,15 տոկոսի չափով տուժանքի բռնագանձում, որը կհամարվեր աշխատանքային վեճ և ենթակա առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, այլ նշված գումարները հատուցելու մասին վարչական ակտն օրենքով սահմանված ժամկետում չընդունվելու հետևանքով տվյալ ակտն ընդունված համարվելու վերաբերյալ համապատասխան փաստաթղթի տրամադրում:*

Նշվածը հիմք է տալիս եզրահանգելու, որ իրականում Հայցվորը ներկայացրել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված գործողության կատարման հայց:

(…)

---

[1] Տե՛ս դատական գործը, թերթեր 53-58:

Կողմերի միջև ծագած վեճը բխում է հանրային իրավահարաբերություններից, քանի որ վիճելի իրավահարաբերությունը հանրային որակելու համար առկա են անհրաժեշտ բոլոր վավերապայմանները:

Միայն այն հանգամանքը, որ ակնկալվող փաստաթուղթը կարող է վարչական ակտ չլինել, չի կարող հանգեցնել գործի ենթակայության փոփոխության, քանի որ հայցապահանջով Հայցվորը փաստացի ակնկալում է, որ Պատասխանողը պետք է տրամադրի իրավաբանական ֆիկցիայի ուժով վարչական ակտն ընդունված համարվելու մասին փաստաթուղթ՝ իրականացնելով ‹‹Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին›› ՀՀ օրենքի 48-րդ հոդվածից բխող հանրային իշխանական լիազորությունը, ինչը չի կարող քաղաքացիական դատավարության կարգով դատական վերահսկողության առարկա լինել, քանի որ վարչական մարմինների կողմից հանրային իշխանական լիազորությունների իրականացման նկատմամբ դատական վերահսկողության իրականացումը ՀՀ վարչական դատարանի ե[ւ]թակայության տիրույթում է: Հակառակ պարագայում կստացվի, որ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը պետք է որոշի, թե տվյալ դեպքում արդյո՞ք տեղի է ունեցել իրավաբանական ֆիկցիա, թե՞ ոչ, ինչը դուրս է առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի ենթակայությունից: Միաժամանակ, պահանջն իրավաչափ չլինելու, ներառյալ՝ ակնկալվող փաստաթուղթը վարչական ակտ չլինելու և հետևաբար՝ իրավաբանական ֆիկցիայի բացակայության մասին եզրահանգման գալու դեպքում ՀՀ վարչական դատարանը զրկված չէ վարչական ակտն ընդունված համարվելու մասին փաստաթղթի տրամադրման վերաբերյալ հայցը մերժելու հնարավորությունից:

Նշված պատճառաբանություններով և հիմնավորումներով Դատարանը հանգում է այն հետևության, որ գործը ենթակա չէ ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, այլ ենթակա է վարչական դատարանին, հետևաբար գործը պետք է ուղարկել ՀՀ վճռաբեկ դատարան՝ դրա ենթակայությունը որոշելու համար (…)»[2]:

[2] Տե՛ս դատական գործը, թերթեր 1-7:

Գործի ենթակայության հարցի վերաբերյալ հայցվորի ներկայացուցչի դիրքորոշումը.

8. Հայցվորի ներկայացուցիչը, հղում կատարելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ և 81-րդ հոդվածներին, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածին, հայտնել է, որ սույն վեճը ենթակա է քննության վարչական դատավարության կարգով և պետք է քննվի ՀՀ վարչական դատարանի կողմից, իսկ առաջացած ենթակայության վերաբերյալ վեճը պետք է լուծվի գործը ՀՀ վարչական դատարանի ենթակայությանը վերապահելով՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(...) գործերի ենթակայության հարցը լուծելիս անհրաժեշտ է առաջնորդվել ոչ թե ձևական նմանություններով, այլ վեճի բովանդակությամբ և այն հանգամանքով, որ սույն գործը բխում է վարչական մարմնի կողմից վարչական ակտ չընդունելու հետևանքով առաջացած հանրային իրավահարաբերություններից, ինչը վկայում է դրա վարչական դատավարության կարգով քննության ենթակա լինելու մասին»:*

Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը.

9. Սույն գործով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *հիմնավոր է արդյո՞ք Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԼԴ/0534/02/26 (ՎԴ/5707/05/26) գործն ըստ [Ս.Վ.] ներկայացուցչի հայցի ընդդեմ Լոռու մարզի Ալավերդի համայնքի ղեկավարի՝ 2023 թվականի դեկտեմբերի 20-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 5-ն ընկած ժամանակահատվածի համար [Ս.Վ.] չվճարված աշխատավարձի, հասանելի արձակուրդային վճարների, ինչպես նաև կեդրանցված յուրաքանչյուր օրվա համար մինչև թիվ ՎԴ6/0119/05/24 վարչական գործով կայացված և օրինական ուժի մեջ մտած վճռի՝ օրինական ուժի մեջ մտնելը վճարման ենթակա աշխատավարձի 0,15 տոկոսի չափով տուժանքի փոխհատուցման մասին վարչական ակտն օրենքով սահմանված ժամկետում չընդունվելու հետևանքով տվյալ ակտն ընդունված համարելու վերաբերյալ համապատասխան փաստաթուղթ տրամադրելուն պարտավորեցնելու պահանջների մասին, ենթակա չէ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:*

10. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Մասնագիտացված դատարաններն են՝*

1) վարչական դատարանը. (...)»:

Նույն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի»:*

Նույն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Մասնակության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի և հակակոռուպցիոն դատարանին ենթակա գործերի»:*

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (...) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն՝ *«(...) 2. Դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում վարչական դատարանից վերահասցեագրված հայցադիմումը վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը:*

(...)

6. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված դեպքերում Վճռաբեկ դատարանի նախագահը և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահները գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնօրյա ժամկետում որոշում են գործի ենթակայությունը:

7. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունելու համար Վճռաբեկ դատարանի նախագահը հրավիրում է նիստ՝ իր և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահների մասնակցությամբ, որն իրավազոր է, եթե դրան մասնակցում են նիստին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք:

8. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունվում է նիստին ներկա անձանց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում: Որոշմանը կողմ քվեարկած դատավորների կազմից և նրանց կողմից որոշված դատավորը կազմում է որոշման նախագիծը:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան:

10. Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով գործի ենթակայությունը սահմանելու մասին որոշում կայացվելու դեպքում չի կարող վերաքննիչ բողոք բերվել սույն օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետի հիմքով այն պատճառաբանությամբ, որ գործը ենթակա չի եղել քննության քաղաքացիական դատավարության կարգով»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի՝ մինչև 2025 թվականի հունվարի 1-ը գործող խմբագրությամբ 1-ին կետի համաձայն՝ *«Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, ներառյալ՝ հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու հետ կապված վեճերը»:*

2024 թվականի մայիսի 2-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-220-Ն ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ *«2013 թվականի դեկտեմբերի 5-ի Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի (...) 10-րդ հոդվածում 1-ին մասի 1-ին կետն ուժը կորցրած ճանաչել»:*

2024 թվականի մայիսի 2-ին ընդունված և 2025 թվականի հունվարի 1-ին ուժի մեջ մտած «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-222-Ն

ՀՀ օրենքով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24-րդ գլխի կարգավորման շրջանակը ընդլայնվել է՝ դրանում ներառելով նաև հանրային ծառայության հետ կապված վեճերը: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Դատարանը սույն գլխով սահմանված կարգով քննում և լուծում է աշխատանքային պայմանագրի կամ անհատական իրավական ակտի փոփոխման, լուծման, հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու հետ կապված վեճերը և աշխատողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հետ կապված անհատական աշխատանքային վեճերը (...)»:*

11. Նախորդ կետում վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից հետևում է, որ մինչև 2025 թվականի հունվարի 1-ը գործող իրավակարգավորումների պայմաններում ՀՀ վարչական դատարանի ենթակայությանը վերապահված էին նաև հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու հետ կապված վեճերը: Մինչդեռ, 2025 թվականի հունվարի 1-ից օրենսդիրը նշված գործերի քննությունը վերապահել է առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններին՝ ՀՀ վարչական դատարանի քննությանը թողնելով միայն այն վեճերը, որոնց վերաբերյալ հայցադիմումները վարչական դատարանի կողմից վարույթ են ընդունվել մինչև 2025 թվականի հունվարի 1-ը:

12. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- Ս.Վ. ներկայացուցիչը 2026 թվականի ապրիլի 7-ին հայցադիմում է ներկայացրել (վարչական դատավարության էլեկտրոնային համակարգի միջոցով) ՀՀ վարչական դատարան ընդդեմ Լոռու մարզի Ալավերդի համայնքի ղեկավարի՝ 2023 թվականի դեկտեմբերի 20-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 5-ն ընկած ժամանակահատվածի համար Ս.Վ. չվճարված աշխատավարձի, հասանելի արձակուրդային վճարների, ինչպես նաև կետանցված յուրաքանչյուր օրվա համար մինչև թիվ ՎԴ6/0119/05/24 վարչական գործով կայացված և օրինական ուժի մեջ մտած վճռի՝ օրինական ուժի մեջ մտնելը վճարման ենթակա աշխատավարձի 0,15 տոկոսի չափով տուժանքի փոխհատուցման մասին վարչական ակտն օրենքով

սահմանված ժամկետում չընդունվելու հետևանքով տվյալ ակտն ընդունված համարելու վերաբերյալ համապատասխան փաստաթուղթ տրամադրելուն պարտավորեցնելու պահանջների մասին[3],

- գործը ՀՀ վարչական դատարանի՝ 2026 թվականի ապրիլի 14-ի որոշմամբ վերահասցեագրվել է Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին՝ այն պատճառաբանությամբ, որ 2025 թվականի հունվարի 1-ից աշխատանքային վեճերի վերաբերյալ գործերի քննությունը վերապահվել է առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին[4],

- Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2026 թվականի մայիսի 5-ի որոշմամբ գտել է, որ հայցվորը ոչ թե պահանջել է չվճարված աշխատավարձի, հասանելի արձակուրդային վճարների, ինչպես նաև կետանցված յուրաքանչյուր օրվա համար մինչև թիվ ՎԴ6/0119/05/24 վարչական գործով կայացված և օրինական ուժի մեջ մտած վճռի օրինական ուժի մեջ մտնելը վճարման ենթակա աշխատավարձի 0,15 տոկոսի չափով տուժանքի բռնագանձում, որը կհամարվեր աշխատանքային վեճ և ենթակա առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, այլ նշված գումարները հատուցելու մասին վարչական ակտն օրենքով սահմանված ժամկետում չընդունվելու հետևանքով տվյալ ակտն ընդունված համարվելու վերաբերյալ համապատասխան փաստաթղթի տրամադրում[5]:

13. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 10-11-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է նշել, որ սույն գործով հայցվորը՝ Լոռու մարզի Ալավերդի համայնքի ղեկավարի՝ 2023 թվականի հունվարի 3-ի թիվ 16-Ա կարգադրությամբ նշանակվել է Ալավերդի համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնում, իսկ ներկայացված հայցով հետապնդվող իրավունքը՝ 2023 թվականի դեկտեմբերի 20-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 5-ն ընկած ժամանակահատվածի համար չվճարված աշխատավարձը, արձակուրդային վճարները և տուժանքի փոխհատուցումը, ուղղակիորեն բխում է

[3] Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:
[4] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:
[5] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

հայցվորի՝ որպես համայնքի ղեկավարի տեղակալի, ծառայության իրականացման հետ կապված իրավահարաբերությունից: Այն հանգամանքը, որ հայցվորն իր պահանջը ձևակերպել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի ուժով վարչական ակտն ընդունված համարվելու վերաբերյալ համապատասխան փաստաթուղթ տրամադրելուն պարտավորեցնելու եղանակով, ինքնին չի կարող պայմանավորել գործի ենթակայության հարցի լուծումը, քանի որ ենթակայության որոշման համար էական է հայցի հիմքում ընկած իրավահարաբերության բնույթը, որից բխում է հայցվորի հետապնդվող իրավունքը:

Տվյալ դեպքում հայցվորի կողմից դատական պաշտպանության հետապնդվող իրավունքն իր էությամբ բխում է հանրային ծառայության իրականացման հետ կապված հարաբերությունից, իսկ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածով նախատեսված կառուցակարգի կիրառման հարցը սպասարկում է նշված իրավունքի դատական պաշտպանության հնարավորությունը:

Միաժամանակ, սույն որոշման 11-րդ կետում վկայակոչված օրենսդրական փոփոխությունների արդյունքում, օրենսդիրը հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու հետ կապված վեճերը հանել է ՀՀ վարչական դատարանի ենթակայությունից և վերապահել առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների քննությանը՝ քաղաքացիական դատավարության կարգով, որպիսի կարգավորումից բացառություն է նախատեսել միայն այն վեճերի համար, որոնց վերաբերյալ հայցադիմումները ՀՀ վարչական դատարանի կողմից վարույթ էին ընդունվել մինչև 2025 թվականի հունվարի 1-ը:

Սույն դեպքում հայցադիմումը ՀՀ վարչական դատարան է ներկայացվել 2026 թվականի ապրիլի 7-ին, այսինքն՝ 2025 թվականի հունվարի 1-ից հետո:

14. Վերոգրյալից հետևում է, որ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԼԴ/0534/02/26 (ՎԴ/5707/05/26) գործն ըստ Ս.Վ. ներկայացուցչի հայցի ընդդեմ Լոռու մարզի Ալավերդի համայնքի ղեկավարի՝ 2023 թվականի դեկտեմբերի 20-ից մինչև 2025

թվականի դեկտեմբերի 5-ն ընկած ժամանակահատվածի համար Ս.Վ. չվճարված աշխատավարձի, հասանելի արձակուրդային վճարների, ինչպես նաև կետանցված յուրաքանչյուր օրվա համար մինչև թիվ ՎԴ6/0119/05/24 վարչական գործով կայացված և օրինական ուժի մեջ մտած վճռի՝ օրինական ուժի մեջ մտնելը վճարման ենթակա աշխատավարձի 0,15 տոկոսի չափով տուժանքի փոխհատուցման մասին վարչական ակտն օրենքով սահմանված ժամկետում չընդունվելու հետևանքով տվյալ ակտն ընդունված համարելու վերաբերյալ համապատասխան փաստաթուղթ տրամադրելուն պարտավորեցնելու պահանջների մասին, ենթակա չէ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, հիմնավոր չէ:

Ուստի, Ս.Վ. ներկայացուցչի հայցի հիման վրա հարուցված թիվ ԼԴ/0534/02/26 (ՎԴ/5707/05/26) գործը ենթակա է Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

թիվ ԼԴ/0534/02/26 (ՎԴ/5707/05/26) գործն ըստ Ս.Վ. ներկայացուցչի հայցի ընդդեմ Լոռու մարզի Ալավերդի համայնքի ղեկավարի՝ 2023 թվականի դեկտեմբերի 20-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 5-ն ընկած ժամանակահատվածի համար Ս.Վ. չվճարված աշխատավարձի, հասանելի արձակուրդային վճարների, ինչպես նաև կետանցված յուրաքանչյուր օրվա համար մինչև թիվ ՎԴ6/0119/05/24 վարչական գործով կայացված և օրինական ուժի մեջ մտած վճռի՝ օրինական ուժի մեջ մտնելը վճարման ենթակա աշխատավարձի 0,15 տոկոսի չափով տուժանքի փոխհատուցման մասին վարչական ակտն օրենքով սահմանված ժամկետում չընդունվելու հետևանքով տվյալ ակտն ընդունված համարելու վերաբերյալ համապատասխան փաստաթուղթ տրամադրելուն պարտավորեցնելու պահանջների մասին, ենթակա է Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ
ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ
ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ
ԴԱՏԱՐԱՆԻ
ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ
ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ
ԴԱՏԱՐԱՆԻ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ԳՈՌ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ
ԱՐՄԱՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ
ԱՐՄԵՆ ԴԱՆԻԵԼՅԱՆ